ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Անուն Ազգանուն

Լենա Նանուշյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Ռուսաստանի Դաշնություն, Սարանսկ, 2018 թվականի սեպտեմբերի 3-4

4.Հրավիրող կողմը

ՌԴ առողջապահության նախարարություն

5. Գործուղման նպատակը – Մասնակցություն առողջապահության բնագավառում ԱՊՀ համագործակցության խորհրդի 28-րդ նիստին

6. Քննարկված թեմաները

Հանդիպմանը հրավիրված էին մասնակցելու ԱՊՀ անդամ պետությունների առողջապահության նախարարներ, ոլորտի բարձրաստիճան պաշտոնյաներ, փորձագետներ:

Նիստի աշխատանքը վարեց ՌԴ առողջապահության նախարար Վերոնիկա Սկվորցովան:

Նիստում քննարկվեցին ԱՊՀ անդամ պետությունների միջև ստորագրված մի շարք համաձայնագրերով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքն ու հետագա քայլերը: Քննարկվեցին ԱՊՀ շրջանակում օրենսդրական մոդելային բարեփոխումների ընդունման, ինչպես նաև մի շարք հիվանդությունների դեմ համատեղ պայքարի ուղղությամբ ընդհանուր գործողությունների մշակմանը վերաբերող հարցեր:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համաժողովի ընթացքում ելույթով հանդես եկավ Առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանը: Ներկայացվեցին Հայաստանում բնակչության առողջության պահպանման, տուբերկուլոզի, վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների, ծխախոտի դեմ պայքարին ուղղված աշխատանքներն ու արձանագրված առաջընթացը, ինչպեն նաև ԱՊՀ անդամ պետությունների հետ համագործակցության հնարավորությունը:

Երկկողմ հանդիպումներ կայացան ՌԴ առողջապահության նախարար Վերոնիկա Սկվորցովայի, ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ միացյալ ծրագրի Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների տարածաշրջանային տնօրեն Վինեյ Սալդանայի և ԱՊՀ անդամ պետությունների բարձրաստիճան ներկայացուցիչների հետ: Վերջիններիս հետ քննարկվեցին հետագա համագործակցության ուղղությունները, որոնք կնպաստեն ԱՊՀ անդամ պետությունների բնակչությունների առողջությանը և բարեկեցությանը:

Համաժողովի շրջանակում այց կայացավ Ռուսաստանում առաջատար «Բիոխիմիկ» դեղարտադրող գործարան՝ ծանոթանալու վերջինիս գործունեությանն ու աշխատանքին, քննարկելու հնարավոր համագործակցությունը:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Նիստի ընթացքում քննարկված փաստաթղթերի ընդունումը հնարավորություն կտա համատեղ աշխատանք կատարելու օրակարգային հարցերը լուծելու ուղղությամբ:

9. Առաջարկությունները

Առաջարկվեց խորացնել փոխհամաձայնեցված համագործակցությունն ԱՊՀ անդամ պետությունների միջև, ինչպես նաև ԱՊՀ անդամ երկրների միասնական գործակցությունն ԱՀԿ եվրոպական տարածաշրջանի մյուս երկրների հետ:

10. Գործուղվողները

Լենա Նանուշյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը

2018թ. սեպտեմբերի 25

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 25.09.2018 18:20:16 GMT+4

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157